ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2025թ. թիվ 282-Ա

Ա.ՄԽՈՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2025 թվականի հունիսի 13-ի արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արամ Արտավազդի Մխոյանին 2025 թվականի հունիսի 27-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2029 թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ:

2. Ա.Մխոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

18/06/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հունիսի 18
ք.Վանաձոր